

Պարզե մտաց հասու լինել
 Ե՛յն իմաստից, զորս կամիս:
 Կամօք քոյին արդ զեմ՝ կնքեա՛
 Բանս գովեստից բարերար,
 Բարոյդ հաղորդ արա՛ս զանձն իմ՝
 Տկար գրչես միշտ և յար:

Ե.Գ.ԱԼԶԱՐ ԱՐՔ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ա Ձ Գ Ա Յ Ի Ն

Վեհափառ կաթողիկոսը, որ անձնական տկարութենէ ստիպեալ՝ յուլիս 12-ին մեկնելով շառիճոյ վանքը օգափոխութեան գացած էր, զոհոթ թիւն Եստուծոյ, կատարեալ առողջութիւն ստանալով անդ, ամսոյս 11-ին վերագարձաւ այսր ՚ի Սուրբ Լջմիածին:

Գ-եր. Գեորգ վարդապետ Երմաշու վանահայրը և Գ-եր. Գեոնդ վարդապետ Պանտրմայու վիճակի Եռաջնորդը՝ ներկայ ամսոյս 14 Խաչվերացի կիւրակէն Լալիսկոպոսական բարձր աստիճանին արժանացան՝ ձեռնադրութեամբ նորին Վեհափառութեան Կաթողիկոսի ամենայն շայոց:

Պարոն Մկրտիչ Սանասարեանց Եղգասէր անձը, որոյ եռանդը և բարեգործութիւնքը արդէն մեր սիրելի Եղգայնոցմէ ոչ սակաւուց քաջայայտ է, Ս.Եթոռոյս տարանին հետեւեալ նուէրները բարեհաճած է մատուցանել:

- Մի Երազածոյլ մեքենայ.
- Մի մեքենայ գիծեր կտրելու.
- Պղնձեայ չորս տեսակ զծեր.
- Մարզաններ.
- Չանաղան զեղեցիկ ծաղիկներ, զարդեր, թուանշաններ և շպօններ:

Բաց ՚ի սոցանէ ինչպէս անցեալ տարի նոյնպէս այս տարի ըզձացած է նուիրել տարեկան երկու երկու օրինակ Երտրատ, պսինքն, Չ օրին. Եղեքսանդրապօլոյ. Չ օրին Կարնոյ. Չ օրին. Վանայ. Չ օրին. Մշոյ. Չ օրին. Գալսիժոյ. Չ օրին. Թ՛հրանի Եղգային ուսումնարանայ:

Ուստի կը փութամք մեր խորին շնորհակալութիւնը յայտնել Նորին Եղգասիրութեան Պր. Մկրտիչ Սանասարեանց, և բարեմաղթել ՚ի Տեսունէ, որ վարձահատոյց լինի նմին. և օրհնէ նորին բոլոր ձեռնարկութիւնքը և բարի նպատակները. և արժանաւոր պարզեօք պսակէ զնա թէ՛ աստ և թէ՛ ՚ի հանդերձեալն:

Օգոստ. 21-ին կէս օրէն զկնի ժամը եւրոպական չորսին սկիզբը՝ սաստիկ երկրաշարժութիւն պատահելով ՚ի Շամախի, քաղաքին բոլոր բնակիչքը ահուգողի մէջ պաշարած է՝ ինչպէս որ կը գրէ Գ-եր. Ենդրէաս Երքեպիսկոպոս՝ յիշեալ վիճակին հոգեւոր Տեսուչը առ Վեհ. Կաթողիկոսն փութացուցած յայտարարութեամբ:

Վաղաքին բնակիչ հինգ հազար տանց հարիւր քսան տունէն ՚ի զատ, մնացեալ բոլորը գրեթէ խախտուած ու մեծամեծ փասաներ կրած են:

Շայոց հոյակապ Ս. Եստուածածին Մայր Լիկեղեցոյն տանիքը, կաթուղիկէն, թաղակապ կամարքը մանաւանդ արեւմտեան կողման, և զանգակատունը իսպառ խախտուած ու փասաւորուած են: Վմանապէս արեւմտեան կողման որմունքը տանիքից մինչև հիմը, ինչպէս նա և Լիկեղեցոյն չորս սիւներէն մին կամարէն մինչև ստորոտը ձեղքուած են. այնպէս որ Լիկեղեցոյն մէջ ժամերգութիւն պաշտելը կասկածելի միանգա-

մոյն փասնգաւոր եղած է երկրաշարժութեան հետզհետէ պատահելոյն ու շարունակելոյն պատճառով, թէպէտ մերթ թեթեւեւ մերթ զգալի կիրպիւ կը ցնցէ: Աւստի քաղաքական իշխանութեան կողմանէ արհորինուած է յիշատակեալ կկեղեցւոյ զբոսները փակել և կնքել:

Մշակուածքներ և Աւսումնարանն ևս խախտուածքներէ զերծ մնացած չեն:

Հաւաստի տեղեկութենէ կ'իմանանք նաև, թէ՛ Շամախիէն սասն և հինգ վերստ հեռու գտնուած թուրքարնակ Արենդի գիւղը խապառ քայքայուած է:

Վեհ հարգելի ստեղծականաբով վերոյիշեալ ստղնապնները և արկածները, փութաց Հայրապետական Առնդակով սփոփել և մխիթարել Շամախիարնակ իւր սիրեցեալ որդւոց վշտացեալ և տագնապեալ սրտերը: Եւ զոհութիւն Մատուծոյ, որ Շամախւոյ բոլոր բնակիչքը նիւթական վնասէն 'ի բաց մարդոց կորուստներ ունեցած չ'են:



Մայր Աթոռոյս մէջ սկսեալ շինութեանց և վերանորոգութեանց 'ի նպաստ նուիրատու Ազգայնոց անուանց ցուցակները այսուհետև կրիւթամբ հրատարակել ամսադրոյս միջոցաւ:

Եյս անգամ Պարսկաստանի Վալիբեթու վեճակին մէջ՝ նորին թաճակալ Առաջնորդ Վերապատիւ Վրիգոր Յովեանց Արքեպիսկոպոսի ձեռամբ հաւաքեալ նպաստից և նուիրատուաց անուանց ցուցակը հասանելով՝ Արին Վեհագոտութեան, կը հրատարակեմք ստորև, թէև զեռ կը շարունակվի ստորագրութիւնը յիշեալ վեճակին մէջ. յետ այսորիկ ընդունվածներն ևս հետզհետէ շարունակել կը խոստանամք. նոյնպէս միւս

վեճակաց ցուցակներն, երբ ամբողջապէս հասնին ժապաւինեալ տուճարօքն 'ի Ս. Աթոռս:

Ի ԴԱԻԲԷԺ ԲԱՂԱԲԻ

	Գումար	Գումար
Մօսիօ Վասապուայ Վաղղիացի և Տիկինն նորին Մեհրի Խանուժ	35	
Աղա Ալուաման երեքին եղբարք Ազարբէկեանց	30	
Պր. Կոստոյ Յարութիւնեան Տրփխիսեցի	20	
Պր. Աստուածատուր Ղարաբէկեանց Վաւրիբեցի	10	
Սարգիս Տէր Օհանեանց Ղարազաղցի 'ի Վաւրեժ բնակեալ . .	5	
Վասապուր Շահնազարեան Ղարազաղցի 'ի Վաւրեժ բնակեալ . .	3	
Մարի Միքայէլեան Պետրոսեանց Ղարազաղցի 'ի Վաւրեժ բնակեալ	3	
Ահարօն Չարիարեան Աղուլեցի Աղքատ Ղազարոս Փիրումեանց Տիփխիսեցի	5	
Ետգար Մեղիք-Մինասեանց Վաւրիբեցի	2	
Յակովբ Խուտափերսեանց Վաւր. Հայրապետ Մեղիք-Մնացականեան Ղարազաղցի 'ի Վ. բնակեալ . .	2	
Տիգրան Աղայ Ղարակեղեանց, Կոստանդնուպօլսեցի	15	
Աբրահամ Յ. Վարդանեանց Ղարազաղցի, 'ի Վաւրեժ բնակեալ	6	
Մահտեսի Յարութիւն թուճանեանց Ղարազաղցի	3	
Յովհաննէս Ազարբեանց Ղարազաղցի 'ի Վաւրեժ բնակեալ . .	3	
Թապալէոս Թամիրեանց Շուշեցի	10	
Մանաս Օհանեանց Շուշեցի . .	5	
Սիմօն Յովակիմեան Շուշեցի . .	1	
Աւետիս Խաչատրեան Շուշեցի . .	5	
Կարապետ Փարսազանեան Շուշ. Թաճանս Ճալալեանց Պօլսեցի 'ի Վաւրեժ բնակեալ	1	
Մատթէոս Ազարբեան Շուշեցի	5	
Յովհաննէս Վալանթարեանց Աղուլեցի	7	
Վանիէլ Մ. Շահպասեան Վաւր.	1	